

Ակցիան գործում է 2021թ. հունիսի 1-ից մինչև օգոստոսի 31-ը ներառյալ

Ընդհանուր կանոններ

«Ոսկու միավորներ»

Ակցիայի գործողության ընթացքում «Կոնվերս Բանկ» ՓԲԸ /Այսուհետ՝ Բանկ/ կողմից թողարկված Վիզա վճարային քարտերով նվազագույնը հանրագումարային 200,000 ՀՀ դրամ գումարի չափով անկանխիկ գործարքներ կատարված հաճախորդները կկուտակեն «Ոսկու միավորներ» հետևյալ չափերով.

| | |
|---------------------------|------------|
| 200,000 - 399,999 ՀՀ դրամ | 200 ոսկի |
| 400,000 - 699,999 ՀՀ դրամ | 400 ոսկի |
| 700,000 - 999,999 ՀՀ դրամ | 700 ոսկի |
| 1,000,000 և ավելի ՀՀ դրամ | 1,000 ոսկի |

- ✓ Յուրաքանչյուր գործարքի գումարը պետք է կազմի առնվազն 5,000 ՀՀ դրամ:
- ✓ Կատարված անկանխիկ յուրաքանչյուր գործարքի դիմաց նույնպես կկուտակվեն միավորներ.
 - ՀՀ-ում գրանցված սպասարկման կետերում՝ 5 ոսկի,
 - ՀՀ-ից դուրս գրանցված սպասարկման կետերում՝ 10 ոսկի:
- ✓ Անկանխիկ գործարքների հաշվարկը կկատարվի հետևյալ սկզբունքով՝ ՀՀ դրամ արժույթով քարտերի դեպքում հաշվարկին կմասնակցի հաշվեգրված գումարի դրամային արտահայտությունը, իսկ արտարժույթային քարտերի դեպքում՝ քարտի արժույթով հաշվեգրված գումարը փոխակերպված դրամի հաշվեգրման օրվա համար սահմանված ՀՀ ԿԲ փոխարժեքով:
- ✓ «Կոնվերս միավորները» զուգահեռաբար կշարունակեն կուտակվել սահմանված կարգով:

Սահմանափակումներ

- ✓ Ակցիային մասնակցում են միայն Բանկի կողմից VISA վճարահաշվարկային համակարգի ներքո թողարկված քարտերը՝ բացառությամբ կորպորատիվ և VISA Gift (այդ թվում՝ Visa Gift Instant Issue) քարտատեսակների:
- ✓ Ակցիայի պայմանները չեն տարածվում կից և հավելյալ քարտերի վրա:
- ✓ Հաշվարկին չեն մասնակցում այն գործարքները, որոնց գծով կատարվել է գումարի հետվերադարձ:
- ✓ Քարտից քարտ, քարտից այլ հաշվի փոխանցումները, կոմունալ վճարումները (ներառյալ՝ հեռահաղորդակցման, հեռուստատեսության, ինտերնետ ծառայությունների դիմաց վճարները), վարկի մարումները, հաշիվների, քարտերի, էլեկտրոնային դրամապանակների, խաղատների և շահումով խաղերի խաղադրույքների, վիրտուալ խաղատների և խաղադրույք ընդունող ընկերությունների հաշիվների համալրումները, պետական մարմինների ծառայությունների դիմաց վճարները, տուրքերի, տուգանքների, օրենքով պարտադրված հարկերի, այլ վճարների մուծումները և Բանկի ներքին համակարգերով իրականացված գործառնությունները չեն մասնակցում անկանխիկ գործարքների հաշվարկին:

Մրցանակներ

Ակցիայի շրջանակներում ամենաշատ «Ոսկու միավորներ» կուտակած առաջին 10 քարտապանները կստանան 10 գրամանոց ոսկու ստանդարտացված ծուլակտորներ (հարգ՝ 999.9), իսկ հաջորդիվ ամենաշատ ոսկու միավորներ հավաքած 40 քարտապանները կստանան 5 գրամանոց ոսկու ստանդարտացված ծուլակտորներ (հարգ՝ 999.9):

- ✓ Հավասար «Ոսկու միավորների» դեպքում առաջնահերթությունը կտրվի քանակային շատ գործարք կատարած քարտապանին:

- ✓ Ակցիայի ժամկետի ավարտին 50 մասնակիցները հաղթող ճանաչվելու վերաբերյալ կտեղեկացվեն Բանկին տրամադրած հեռախոսահամարին SMS հաղորդագրության ստացման և հեռախոսազանգի միջոցով: Մասնակցի 30 օրյա ժամկետում՝ Բանկ ներկայանալու անհնարինության դեպքում մրցանակը կարող է տրամադրվել լիազորված անձին՝ լիազորագրով և անձնագրով: Ամենաշատ միավորներ կուտակված 50 մասնակիցների հետ վերոնշյալ ժամկետում կապի հաստատման անհնարինության (հաճախորդի չպատասխանելու, անհասանելի լինելու կամ այլ) կամ մրցանակը/պարգևատրումը այլ պատճառով չստանալու դեպքում Ակցիայի արդյունքները տվյալ քարտապանի համար համարվում են ուժը կորցրած:
- ✓ Մրցանակի փոխարեն գումարային փոխհատուցում չի իրականացվում և մրցանակը չի փոխարինվում այլ նվերով:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից առաջարկվող Վիզա քարտերի թողարկման և սպասարկման պայմաններին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ <https://conversebank.am/hy/cards/>:

Վեճերի և տարաձայնությունների լուծման կարգ

Հաճախորդի և Բանկի միջև ծագած ցանկացած վեճ և տարաձայնություն նախ և առաջ լուծվում է երկուստեք՝ փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15,

«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ

Էլ. փոստ՝ info@fsm.am

Հեռախոս՝ (+37460) 70-11-11

Ֆաքս՝ (+37410) 58-24-21

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել (+374 10) 511 211 հեռախոսահամարով
Viber՝ +374 95 511 211
Skype՝ conversebank-callcenter